ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի գիտություն Հայաստանյայց եկեղեցու հոգևորական դասին և հավատացյալներին, հայտնում ենք, թե Մայր Աթոռի պաշտոնական հաղորդագրությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից 1968-ին կարգալույծ հռչակված Սարգիս Անդրեասյանը (նախկին քահանա Երևանի ս. Սարգիս եկեղեցու) Անթիլիասի գահակալ Տ. Տ. Խորեն կաթողիկոսի կողմից մի քանի ամիս առաջ վերականգնվել է իր քահանայական կարգի մեջ և ուղարկվել Միացյալ Նահանգներ, ուր տ. Հրանտ արքեպ. Խաչատրյանը նրան նշանակել է հոգևոր հովիվ Չիկագո քաղաքում:

Հանուն ազգիս Սրբազնագույն Հայրապետի, այսու լիազորված ենք հայտարարելու, որ Անթիլիասի Գահակալը նման կանոնական որևէ իրավասություն չունի, հետևաբար Սարգիս Անդրեասյանը է՛ ու կմնա՛ կրոնական կարգից զուրկ աշխարհական անձ, որը չունի և երբեք չի ունենալու որևէ հանգամանք՝ եկեղեցական խորհուրդ կամ կարգ կատարելու:

Սույն հարցի վերաբերյալ Վեհափառ Հայրապետի հատուկ նամակը 12 փետրվար 1970 թվակիր, ուղղված Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին, ինչպես և Մայր Աթոռիս միաբան տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի 29 դեկտեմբեր 1969 թվակիր նամակը, ուղղված Անթիլիասի Դրան եպիսկոպոս տ. Գարեգին եպս. Սարգսյանին, մնացել են անպատասխան:

Հանուն Հայոց Հայրապետի, այսու կոչ ենք անում Անթիլիասի Գահակալին և տ. Հրանտ արքեպ. Խաչատրյանին, որ ետ վերցնեն իրենց ոչ օրինական որոշումը և ընդմիշտ արգելեն Սարգիս Անդրեասյանին քահանայական պաշտոն կատարել:

Կոչ ենք անում նաև Չիկագոյի հայ հավատացյալներին, որ չճանաչեն Սարգիս Անդրեասյանին իբրև քահանա և հոգևոր պաշտոնյա Հայաստանյայց եկեղեցու:

Անթիլիասի Աթոռի կողմից նման արարքը քաջալերանք է հանդիսանում նաև այլ քահանաների՝ լքելու իրենց հոտը և հեռանալու մայր հայրենիքից:

Մայր Աթոռս խոր վշտով է արձանագրում այս տխուր պարագան, որը մի նոր փորձ է՝ հարված հասցնելու ս. Էջմիածնին, կրոնական կյանքը Հայաստանում տկարացնելու միտումով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

12 մարտ 1970 թ.,
Ս. Էջմիածին